ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/11Շ-1

ք. Երևան **« 22 » հուլիսի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մեղրու ՃՇՇՁ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ354+520-կմ364+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

ա) առաջին չափաբաժնի մասով 2019թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 150 օր, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը, իսկ 2020թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[39]

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 899 983 518 (ութ հարյուր ինսունինը միլիոն ինը հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր տասնութ) ՀՀ դրամ, որից 149 997 253 (մեկ հարյուր քառասունինը միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր հիսուներեք ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, իսկ 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 849 999 852 (ութ հարյուր քառասունինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ութ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: **Իսկ 2020թ. համար վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի կնքվի լրացուցիչ համաձայնագիր:**

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[42] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[43] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[44]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 02578338
Հ/Հ 900011025823

____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մեղրու ՃՇՇԳ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, [illegible] 89
«Արդշինբանկ» ՓԲԸ [illegible] մ/ճ
Հ/Հ 2470200016521009
ՀՎՀՀ 09700228

____
(ստորագրություն)

Հավելված թիվ 1
« 22 » հուլիսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/11Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ354+520-կմ364+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների
(Ընդհանուր)

/ՀՀ դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	I. Հողային աշխատանքներ				
1	*19գVIII բնահողի փխրեցում պայթուցքային լիցքերով $h_{միջ}$=0.5մ*	*մ³*	*1702.8*	*9.890*	*16 840.692*
2	*Նախօրոք փխրեցված 19գVIII բնահողի մշակում, բարձում 1.0մ³ շ.փ էքսկավատրով և տեղափոխում լցակույտ 2կմ*	*մ³*	*1702.8*	*2.559*	*4 357.465*
3	*19գV բնահողի մշակում և բարձում էքս. 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ:*	*մ³*	*538.0*	*2.290*	*1 232.020*
4	*Քայքայված ծածկի քանդում էքս. 1.0մ³ շ.փ, բարձում ա/ի, տեղափոխում լցակույտ 2.0կմ*	*մ³*	*12108.0*	*1.740*	*21 067.920*
5	*6գIV բնահողի մշակում բուլդոզերով տեղ. 30մ կուտակումով, բարձում էքս. 1մ³ շ.փ և տեղ. լիցք 2կմ (հարթում, ջրում, խտացում)*	*մ³*	*2573.4*	*2.818*	*7 251.841*
6	*6գIV բնահողի մշակում բուլդոզերով տեղ. 30մ կուտակումով, բարձում էքս. 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ*	*մ³*	*1618.7*	*2.155*	*3 488.299*
7	*8գ III բնահողի մշակում էքս. 1մ³ շ.փ բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ*	*մ³*	*132.8*	*1.322*	*175.562*
8	*Նույնը՝ ձեռքի աշխատանքով*	*մ³*	*15*	*3.422*	*51.330*
	II. Կողային առուներ				
1	*19գVIII բնահողի փխրեցում մանր պայթուցքային լիցքերով $h_{միջ}$=0.5մ*	*մ³*	*403.2*	*9.890*	*3 987.648*
2	*Նախօրոք փխրեցված 19գVII բնահողի մշակում, բարձում ա/ի էքսկավատրով 1մ³ շ.տ և տեղափոխում լցակույտ 2.0կմ*	*մ³*	*403.2*	*2.557*	*1 030.982*
3	*19գV բնահողի մշակում, բարձում էքս. ա/ի 1մ³ շ.տ և տեղափոխում լցակույտ 2կմ:*	*մ³*	*102*	*2.290*	*233.580*
4	*6գIV բնահողի մշակում, բարձում ա/ի էքսկավատրով 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ*	*մ³*	*1462*	*1.740*	*2 543.880*

5	8вIII բնահողի մշակում, բարձում ա/ի ձեռքով և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	12	3.422	41.064
	III. Կողնակներ				
1	Կողնակների ամրացում ավազակոպիճով $h_{միջ}$=4սմ	մ²	27569.2	0.425	11 716.910
	IV. Երթևեկային մաս				
1	Փոսային նորոգում h=3÷5սմ	մ²	468	5.363	2 509.884
2	Փոսային նորոգում խճային հիմքով h=8÷16սմ բիտումի տարածումով 4.12/1000մ²	մ²	392	4.156	1 629.152
3	Բնահողի 10eIV մշակում էքս. 0.5մ³ շ.տ. Բարձում ա/ի և տեղ. 2կմ 1680.0x0.31 h=31սմ	մ³	496	2.600	1 289.600
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	24.8	7.945	197.036
5	Ավազակոպճային շերտ h= 10 սմ (44190.6+1680.66)	մ²	45871.26	0.584	26 788.816
6	Խճային հիմքի h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	45871.26	3.632	166 604.416
7	Խոշորահատիկ ա/բ ներքևի շերտ h=6սմ	մ²	45871.3	6.336	290 640.303
8	Հարթեցնող շերտ $h_{միջ.}$=3սմ	տ	351.1	48.655	17 082.771
9	Մանրահատիկ ա/բ շերտ h=4սմ	մ²	62473.4	4.701	293 687.453
	V. Իջատեղեր				
1	10eIV բնահողի մշակում բուլդոզերով կողքի կուտակումով10մ վրա	մ³	31.4	0.131	4.113
2	Լիցք հանույթի բնահողից բուլդոզերով (ջրում խտացում)	մ³	4.9	0.802	3.930
3	Հողապաստառի հարթեցում բուլդոզերով	մ²	60	0.020	1.200
4	Խճային հիմք h=12սմ	մ²	321.41	1.780	572.110
5	Մանրահատիկ ա/ճ ծածկ h=4սմ	մ²	909.42	4.648	4 226.984
	VI. Արհեստական կառուցվածքներ				
	d=1.0 ե/բ խողովակների նորոգում				
1	Մուտքի և ելքի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	137	6.621	907.077
2	Մաքրում՝ խողովակի մեջ ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ³	41.4	6.621	274.109
3	Մուտքերի գլխամասերի բետոն B20 F100	մ³	16.6	116.076	1 926.862
4	Ելքերի գլխամասերի բետոն B20 F100	մ³	17.94	116.076	2 082.403
5	Գլխադիրների կազմատում պնևմո մուրճով, բարձում ձեռքով ա/ի և տեղ. 2կմ լցակույտ	մ³	31.2	28.617	892.850
6	Մուտքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	51.6	2.478	127.865
7	Ելքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	53.6	2.478	132.821
8	Ե/բ օղակների տեղադրում N12 V=0.35	մ³	1.4	291.400	407.960
9	B20 բետոնից ե/բ օղակների հիմք	մ³	0.5	86.684	43.342
10	h=10սմ ավազակոպճային ենթահիմք	մ²	2.5	0.545	1.363
11	Ե/բ օղակների ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	0.35	40.770	14.270
12	Ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	մ²	160.6	1.234	198.180
	d=1.5, 1.25 ե/բ խողովակների նորոգում				
1	Մուտքի և ելքի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1կմ	մ³	132	6.621	873.972

2	Մաքրում ' խողովակի մեջ ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 20կմ լցակույտ	մ³	57	6.621	377.397
3	Մուտքերի գլխամասերի բետոն B20 F100	մ³	15.76	116.076	1 829.358
4	Ելքերի գլխամասերի բետոն B20 F100, Ջրամեկուսացում	մ³	12.52	116.076	1 453.272
5	Գլխադիրների ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	16.9	28.617	483.627
6	Մուտքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	60	2.478	148.680
7	Ելքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	69	2.478	170.982
8	Ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	մ²	72.8	1.234	89.835
	Ե/բ ուղղանկյուն խողովակների նորոգում				
1	Մուտքերի և ելքերի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	76	6.621	503.196
2	Մաքրում ' խողովակի մեջ ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ³	23	6.621	152.283
3	Մուտքի գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.6	71.870	114.992
4	Ելքի գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	2.4	71.870	172.488
5	Գլխադիրների կազմատում և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	0.8	28.700	22.960
6	Մուտքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	110	2.478	272.580
7	Ելքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	84	2.478	208.152
8	Ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	մ²	10	1.234	12.340
	Կամուրջների նորոգում				
1	Հին ա/բ ծածկի կազմատում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ h=4սմ	մ³	18.86	7.415	139.847
2	Մանրահատիկ ա/բ ծածկ h= 4սմ	մ²	111	4.649	516.039
3	Մայթերի հին ա/բ ծածկի կազմատում ձեռքով, բարձում և տեղափոխում 2կմ լցակույտ	մ²	152.0	0.133	20.216
4	Նոր մայթի ավազային ասֆալտբետոնե ծածկ h=3սմ:	մ²	152.0	3.772	573.344
5	Բազրիքների ներկում	մ²	99.81	1.464	146.122
6	Անվահրիչների ներկում	մ²	106	0.724	76.744
	VI. Գաբիոնային շարվածք				
1	Գաբիոնների համար հողային աշխատանքներ (10eIV բնահող) 0.65մ³, շերեփ տարողությամբ էքսկավատորով գրունտի կողքի պահեստավորումով:	մ³	82	0.737	60.434
2	Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով:	մ²	57	0.340	19.380
3	Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) Հիմնակմախք d=6.5մմ, 1գծմ=0.260կգ, 1հատ=12.3գծմ 1402/365 գ.մ/կգ Ցանցը ամրակով d=3.0մմ, 1մ2=1.445կգ, 1=4մ2 456/661.9 մ²/կգ Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ, 1հատ=1.2գծմ, 1հատ=0.0665կգ 114/227.82 գմ/կգ Մետաղյա ձող d=18մմ, 1գծմ=1.998կգ, 1հատ=1.0մ 8/15.98 հատ/կգ	մ³	57	25.090	1 430.130

4	Նախապես պահեստավորված գրունտի հետլիցք 0.65մ³ շերտի փարողությամբ էքսկավատորով, շերտ-շերտ, խտացում պնևմատոփանով:	մ³	28	1.498	41.944
5	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ³	11.4	5.571	63.509
	VII. Արգելափակոցներ, ուղղորդ սյուներ				
1	Մետաղական արգելափակոցների ապամոնտաժում, բարձում, տեղափոխում 1կմ:	գծ	60	1.913	114.780
2	Ուղղորդ ե/բ սյուների ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ:	հատ	14	4.305	60.270
3	Նոր մետաղական արգելափակոցներ	գծմ	505	24.240	12 241.200
4	Նոր C-1 պլաստիկ ուղղորդ սյուների տեղադրում	հատ	160	6.046	967.360
				Ընդամենը	**909 623.496**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը»՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ354+520-կմ364+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (2019 թ. իրականացվելիք)

/ՀՀ դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
	I. Հողային աշխատանքներ				
1	19 ԳVIII բնահողի փխրեցում պայթուցքային լիցքերով $h_{միջ}$=0.5մ	մ³	1702.8	9.890	16 840.692
2	Նախօրոք փխրեցված 19 ԳVIII բնահողի մշակում, բարձում 1.0մ³ շ.փ էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	1702.8	2.559	4 357.465
3	19աV բնահողի մշակում և բարձում էքս. 1մ ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ:	մ³	538.0	2.290	1 232.020
4	Քայքայված ծածկի քանդում էքս. 1.0մ³ շ.փ, բարձում ա/հ, տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	12108.0	1.740	21 067.920
5	6ԳIV բնահողի մշակում բուլդոզերով տեղ. 30մ կուտակումով, բարձում էքս. 1մ³ շ.փ և տեղ. լիցք 2կմ (հարթում, ջրում, խտացում)	մ³	2573.4	2.818	7 251.841
6	6ԳIV բնահողի մշակում բուլդոզերով տեղ. 30մ կուտակումով, բարձում էքս. 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	1618.7	2.155	3 488.299
7	8ա III բնահողի մշակում էքս. 1մ³ շ.փ բարձում ա/հ և տեղափոխում 2կմ լցակույտ	մ³	132.8	1.322	175.562
8	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	15	3.422	51.330
	II. Կողային առուներ				
1	19 ԳVIII բնահողի փխրեցում մանր պայթուցքային լիցքերով $h_{միջ}$=0.5մ	մ³	403.2	9.890	3 987.648
2	Նախօրոք փխրեցված 19 ԳVII բնահողի մշակում, բարձում ա/հ էքսկավատորով 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	403.2	2.557	1 030.982
3	19աV բնահողի մշակում, բարձում էքս. ա/հ 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ:	մ³	102	2.290	233.580
4	6ԳIV բնահողի մշակում, բարձում ա/հ էքսկավատորով 1մ³ շ.փ և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	1462	1.740	2 543.880

5	8вIII բնահողի մշակում, բարձում ա/ի ձեռքով և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	12	3.422	41.064
	III. Կողնակներ				
1	Կողնակների ամրացում ավազակոպիճով $h_{միջ}$=4սմ	մ²	27412	0.425	11 650.100
	IV. Երթևեկային մաս				
1	Փոսային նորոգում h=3÷5սմ	մ²	468	5.363	2 509.884
2	Փոսային նորոգում խճային հիմքով h=8÷16սմ բիտումի տարածումով 4.12/1000մ²	մ²	392	4.156	1 629.152
3	Բնահողի 10eIV մշակում էքս. 0.5մ³ շ.տ. Բարձում ա/ի և տեղ. 2կմ 1680.0x0.31 h=31սմ	մ³	496	2.600	1 289.600
4	Նույնը՝ ձեռքի աշխատանքով	մ³	24.8	7.945	197.036
5	Ավազակոպճային շերտ h= 10 սմ (44190.6+1680.66)	մ²	45871.26	0.584	26 788.816
6	Խճային հիմքի h=15սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²	մ²	45871.26	3.632	166 604.416
7	Խոշորահատիկ ա/բ ներքևի շերտ h=6սմ	մ²	45871.3	6.336	290 640.303
8	Հարթեցնող շերտ $h_{միջ.}$=3սմ	տ	194.65	48.655	9 470.696
9	Մանրահատիկ ա/բ շերտ h=4սմ	մ²	55074.88	4.701	258 907.011
	V. Իջատեղեր				
1	10eIV բնահողի մշակում բուլդոզերով կողքի կուտակումով10մ վրա	մ³	0	0.131	0
2	Լիցք հանույթի բնահողից բուլդոզերով (ջրում խտացում)	մ³	0	0.802	0
3	Հողապաստառի հարթեցում բուլդոզերով	մ²	0	0.020	0
4	Խճային հիմք h=12սմ	մ²	0	1.780	0
5	Մանրահատիկ ա/ճ ծածկ h=4սմ	մ²	0	4.648	0
	VI. Արհեստական կառուցվածքներ				
	d=1.0 ե/բ խողովակների նորոգում				
1	Մուտքի և ելքի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	137	6.621	907.077
2	Մաքրում՝ խողովակի մեջ ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ³	41.4	6.621	274.109
3	Մուտքերի գլխամասերի բետոն B20 F100	մ³	16.6	116.076	1 926.862
4	Ելքերի գլխամասերի բետոն B20 F100	մ³	17.94	116.076	2 082.403
5	Գլխադիրների կազմատում պենմո մուրճով, բարձում ձեռքով ա/ի և տեղ. 2կմ լցակույտ	մ³	31.2	28.617	892.850
6	Մուտքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	51.6	2.478	127.865
7	Ելքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	53.6	2.478	132.821
8	Ե/բ օղակների տեղադրում N12 V=0.35	մ³	1.4	291.400	407.960
9	B20 բետոնից ե/բ օղակների հիմք	մ³	0.5	86.684	43.342
10	h=10սմ ավազակոպճային ենթահիմք	մ²	2.5	0.545	1.363
11	Ե/բ օղակների ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	0.35	40.770	14.270
12	Ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	մ²	160.6	1.234	198.180
	d=1.5, 1.25 ե/բ խողովակների նորոգում				
1	Մուտքի և ելքի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1կմ	մ³	132	6.621	873.972
2	Մաքրում՝ խողովակի մեջ ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 20կմ լցակույտ	մ³	57	6.621	377.397
3	Մուտքերի գլխամասերի բետոն B20 F100	մ³	15.76	116.076	1 829.358
4	Ելքերի գլխամասերի բետոն B20 F100, Ջրամեկուսացում	մ³	12.52	116.076	1 453.272
5	Գլխադիրների ապամոնտաժում և տեղափոխում	մ³	16.9	28.617	483.627

	լցակույտ 2կմ				
6	Մուտքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	60	2.478	148.680
7	Ելքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	69	2.478	170.982
8	Ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	մ²	72.8	1.234	89.835
	Ե/բ ուղղանկյուն խողովակների նորոգում				
1	Մուտքերի և ելքերի մաքրում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	76	6.621	503.196
2	Մաքրում ' խողովակի մեջ ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում 2կմ լցակույտ	մ³	23	6.621	152.283
3	Մուտքի գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	1.6	71.870	114.992
4	Ելքի գլխամասի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100	մ³	2.4	71.870	172.488
5	Գլխադիրների կազմատում և տեղափոխում լցակույտ 2կմ	մ³	0.8	28.700	22.960
6	Մուտքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	110	2.478	272.580
7	Ելքերի գլխամասերի սվաղ ցեմենտ-ավազային շաղախով 3սմ	մ²	84	2.478	208.152
8	Ջրամեկուսացում տաք բիտումով 2 շերտ	մ²	10	1.234	12.340
	Կամուրջների նորոգում				
1	Հին ա/բ ծածկի կազմատում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 2կմ h=4սմ	մ³	18.86	7.415	139.847
2	Մանրահատիկ ա/բ ծածկ h= 4սմ	մ²	111	4.649	516.039
3	Մայթերի հին ա/բ ծածկի կազմատում ձեռքով, բարձում և տեղափոխում 2կմ լցակույտ	մ²	152.0	0.133	20.216
4	Նոր մայթի ավազային ասֆալտբետոնե ծածկ h=3սմ:	մ²	152.0	3.772	573.344
5	Բազրիքների ներկում	մ²	99.81	1.464	146.122
6	Անվահրիչների ներկում	մ²	106	0.724	76.744
	VI. Գաբիոնային շարվածք				
1	Գաբիոնների համար հողային աշխատանքներ (10eIV բնահող) 0.65մ³, շերեփ տարողությամբ էքսկավատորով գրունտի կողքի պահեստավորումով:	մ³	82	0.737	60.434
2	Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով:	մ²	57	0.340	19.380
3	Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) Հիմնակմախք d=6.5մմ, 1գծմ=0.260կգ, 1հատ=12.3գծմ 1402/365 գ.մ/կգ Ցանցը ամրակով d=3.0մմ, 1մ2=1.445կգ, 1=4մ2 456/661.9 մ²/կգ Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ, 1հատ=1.2գծմ, 1հատ=0.0665կգ 114/227.82 գմ/կգ Մետաղյա ձող d=18մմ, 1գծմ=1.998կգ, 1հատ=1.0մ 8/15.98 հատ/կգ	մ³	57	25.090	1 430.130
4	Նախապես պահեստավորված գրունտի հետլիցք 0.65մ³ շերեփ տարողությամբ էքսկավատորով, շերտ-շերտ, խտացում պնևմատուփանով:	մ³	28	1.498	41.944
5	Ավազակոպճային շերտ h=20սմ	մ³	11.4	5.571	63.509
	VII. Արգելափակոցներ, ուղղորդ սյուներ				
1	Մետաղական արգելափակոցների ապամոնտաժում, բարձում, տեղափոխում 1կմ:	գծմ	0	1.913	0
2	Ուղղորդ ե/բ սյուների ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ:	հատ	14	4.305	60.270
3	Նոր մետաղական արգելափակոցներ	գծմ	0	24.240	0

4	*Նոր C-1 պլաստիկ ուղղորդ սյուների տեղադրում*	*հատ*	*160*	*6.046*	*967.360*
				Ընդամենը	***849 999.852***

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մեղրու ՃՇՇԶ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ Մեղրի մ/6
Հ/Հ 2470200218540000
ՀՎՀՀ 09700228

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 22 » հուլիսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/11Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ354+520-կմ364+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման
(2019 թ. իրականացվելիք)

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Երթևեկելի մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 130 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Իջատեղեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 130 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
4	Խողովակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Կամուրջներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Գաբիոնային շարվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

(Հետագայում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
1	Երթևեկելի մաս	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 25 օր հետո
2	Իջատեղեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 25 օր հետո
3	Անվտանգության էլեմենտներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89
«Արդշինբանկ» ՓԲԸ, Մեղրի մ/ճ
Հ/Հ 2470200016590000
ՀՎՀՀ 09700228

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 22 » հուլիսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/11Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/7	Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ354+520-կմ364+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	...	...	...	...	...	...	730 999 872.0	730 999 872.0	730 999 872.0	849 999 852.0	849 999 852.0	849 999 852.0	849 999 852.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578336
Հ/Հ 900010025822

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գրիգորյան 89
«Արդշինբանկ» ՓԲԸ Մեղրի մ/ճ
Հ/Հ 24702000016540000
ՀՎՀՀ 09700228

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն